

ՄԵՍԿ

Տարեկան գինը 10 րուբլ կէս տարվանը 6 րուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյանց խմբագրատան մէջ:

(Ստորագրողացիք գիտե՛մ են ուղղակի
Тифлис. Редакция „Меск“)

Խմբագրատանը բաց է առաւօտան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Հայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Հայտարարութիւնների համար վճարում են
իրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

Հայունեաց ազգանուէր ընկերութիւնը.— Ներքին տեսութիւնը: Նախապէս: Ներքին լուրերը: Արտաքին տեսութիւնը: Թիֆլիսի խառն լուրերը: «Մշակ» հեռագիրները: Յայտարարութիւնները: Տեղեկացոյցը: Բանասիրական: Ազգային մտածողութիւնները:

ՀԱՅՈՒՆԵԱՅ ԱԶԳԱՆՈՒԹԵՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Այս օրերս ստացանք Կ. Պօլսից այնտեղ կազմված «Հայունեաց ազգանուէր ընկերութեան» կանոնադրութիւնը և նրա հետ մի նամակ տիկին Մարիամ Պիլբորեանից, որի մէջ յարգելի տիկիններ խնդրում է մեզ համոզել Թիֆլիսի Հայ կանանց և օրիորդների ուղեւ Կ. Պօլսում կազմված ընկերութեանը:

Մենք կաշխատենք տպագրել ընկերութեան կանոնադրութիւնը և յարգելի տիկնոջ նամակը, իսկ առ այժմ կը կամենայինք մի բանի խօսք ասել յիշեալ ընկերութեան մասին:

Ճշմարտ է «Հայունեաց ազգանուէր» ընկերութեան նպատակը շատ զովելի և համակրատար է:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՄՏԱՆՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

I

Ազգութիւնը որոշանում է յառաջադիմութեամբ: Երբ մեր խօսքը հայկական ազգութեան վրա է, մենք նորան իր հայրենիքի հետ կապված ենք ուզում մտածել: Միայն այդ պայմանով ազգութիւնը կարող է դառնալ քաղաքական մի մարմին, մի ամբողջութիւն: Առանց հայրենիքի—չը կայ ազգութիւն այդ բառի բուն նշանակութեամբ. երբայցիք, որոնք տարածված են ամբողջ աշխարհում—չեն կազմում մի ազգութիւն, թէպէտ և նրանց այդ տիպոսը տալիս են մի այդպիսի ցրված ազգ, որը այն տէրութեան մէջ իր սեփական, երբայցիք քաղաքականութիւն վարել ուզենայ, կը դառնայ քաղաքական մի կուսակցութիւն և ոչ ազգ, որովհետեւ բոլոր փորձերը տէրութեան մէջ մի այդ տէրութիւն կազմել—զուր հեռանքներ են հասել. կրճաթով երբայցիք, նորա, նպատակով, կամ ուսուս են, կամ գերմանացի, ֆրանսիացի և այլն, որպէս մի ժամանակ նորա լիովին հայացան, առաջին դարերում, որպէս մեր պատմութիւնը մեզ ցոյց է տալիս:

Ուրեմն, թող ներուր մեզ քաղաքական կեանք վարող և կամ դրան ձգտող ազգութիւններին—քաղաքական անակամը կոչենք: Քաղաքական ազգ—անա ինչպէս ենք ուզում ճանաչել մեր հայ-

կան է: Նրա նպատակն է հայազգի իգական սեռի դաստիարակութեանն օգնել:

Բայց արդեօք դորա համար հարկաւոր էր մի առանձին ընկերութիւն կազմել, կամ եթէ այդ ընկերութիւնը ուրիշ ընկերութիւններից վաղ էր կազմված մի-թէ նա չէր կարող միանալ Կ. Պօլսի միւս, միանման նպատակներ ունեցող ընկերութիւնների հետ: Մի և նոյն չէ, միթէ, օգնել աղջիկների թէ տղաների դաստիարակութեան գործին: Նոյն նպատակը չունի, միթէ, և «Արարատեան» ընկերութիւնը: Դա էլ աշխատում է իգական դպրոցներ հիմնել Հայաստանում:

Այդ տեսակ միմեանցից բաժանված գործողութիւնների անյարմարութիւնը նրա մէջն էլ ենք տեսնում, որ ուսաստանցի հայերը կը դժուարանան բոլոր այդ ընկերութիւններին օգնելու:

Որքան մենք համակրեինք «Հայունեաց» ընկերութեանը, մենք չենք կարող մի և նոյն ժամանակ թէ նրան և թէ «Արարատեան» ընկերութեանը ծառայել: Մենք լաւ ենք համարում մի գործ կատարել, բայց օրինաւոր կերպով

կատարել բան թէ հազար և մի գործ յանձն առնել և չը կարողանալ ոչ միւր օրինաւոր կերպով առաջ տանել:

Ընկերութիւնը կազմող պատուելի տիկինները չեն կարող չը խոստովանել որ իրանց ընկերութեան նպատակը միանման է «Արարատեան», «Պարոնասիաց-Արեւելեան» և այլ ընկերութիւններին... Նրանք էլ պատրաստ են, երբ աւելի նիւթական միջոցներ ունենան, հիմնել Հայաստանում օրիորդաց դպրոցներ: Աւելի լաւ էր լինի, միթէ, որ «Հայունեաց» ընկերութեան վարչութիւնը կազմող պատուելի տիկինները մոտէին այն ընկերութեան վարչութիւնը, կամ մասնակցէին այն ընկերութեան ընդհանուր ժողովին, որ պէտք է կազմվի Կ. Պօլսի բոլոր ազգային ընկերութիւնների միանալուց:

Ընկերութեան կանոնադրութիւնից մենք չենք տեսնում, որ «Հայունեաց» ընկերութիւնը միւս ընկերութիւններից մի որ և է տարբեր նպատակ ունենալ: Իսկ միանալով նրանք բոլորը աւելի մեծ ոյժ կարող էին ունենալ և աւելի մեծ գումարների սպասել թէ ու-

սահայերի և թէ թիւրքաց հայերի կողմից: Մանաւանդ եթէ ոչինչ խտրութիւն չը դնեն Հայ մանուկների դասնութեան մէջ:

Բայց եթէ «Հայունեաց» ընկերութիւնը ոչինչ պայմանով չի կամենայ միանալ Կ. Պօլսի միւս ընկերութիւնների հետ, մենք նրա նպատակին այնուամենայնիւ այնքան ենք համակրում, որ մեզ թոյլ կը տանք յորդորել Թիֆլիսի Հայունեաներին իրանց մէջ մի ընկերութիւն կազմել, որ կարողանալ Կ. Պօլսի Հայ կանանց ընկերութեան Ռուսաստանի բաժին համարվել:

Իսկ մենք ինքներս նուիրել ենք մեր ոյժերը «Արարատեան» ընկերութեանը ծառայելու և աւելի մեծ եռանդով էլ կը նուիրենք մեր բոլոր ջանքերը այն ընկերութեան ծառայութեանը, որ պիտի կազմվի Կ. Պօլսի բոլոր ազգային ընկերութիւնների միմեանց մէջ միանալուց:

Այդ է մեր վերջին խօսքը Կ. Պօլսի այն բոլոր Հայոց ընկերութիւնների վերաբերութեամբ, որոնց նպատակն է միմյանց ուսում տարածել Հայաստանում:

Գ. Ա.

կական ազգը: Ազգ—առանց հայրենիքի և հայրենիք—առանց ազգի ծիծաղելի դադափախն էր, որպէս ծիծաղելի էին մեր այն բազմաթիւ «ազգաւորները», որոնց համար հայութիւնը ամենուրեք էր, ուր մի հայ կար, իսկ հայրենիք—ամենուրեք, ուր մի աւերակ, որին նա սակայն բաւականա-

նում էր միայն երազում ցնորել: Դարձնում ենք մեր հայեացքը դէպի մօտադին անցեալը և դուրս ենք մի մեծ միջնորդութիւն, տեսնելով որ մեր հայրենիքը յառաջադիմութեան շաղկի վրա է: Ազգի համար դա չորսդորդութիւն չէ, այլ փաստ: Համեմատելով մօտ անցեալը Հայաստանը այժմեանի հետ. մեծ զանազանութիւն: Ոչ այն պատճառով, որ մեծ գործեր կատարեցինք, մեծ յաղթութիւններ արինք, այլ այն պատճառով, որ այդ անձկայի կէտին հասնելու համար նկատվում է ամենուրեք՝ եռանդ և հաւատ: Մենք հաւատում ենք մեր ցանկութիւնների իրազօրծվելու, և այդ հաւատը արդէն ենթադրութիւններ է պահանջում, որոնց մի նշանաւոր մասը արդէն իրական են և ոչ երազական: Համեմատելով մեր խօսքերը, մեր միտքը կարտայայտելու այսպէս. մինչ այժմ մենք ոչնչով կապված չէինք իրապական քաղաքականութեան հետ, իսկ այժմ Եւրոպան իրաւունք է ձեռք բերած Թիֆլիսից պարբերապէս հայկ պահանջել նորա մեզ համար կատարած կառավարական վերանորոգութիւնների համար. դրանով Եւրոպան մեզ ճանաչելու որպէս ազգութիւն և իրաւատէր մեր քաղաքական ապագայի համար մտածելու: Բայց այդ Եւրոպայի իրաւունքն է. մենք չանցանք դո՛ւն նորանով, որ ազատորէն և իրաւունքով զանգառվելու միջոց ձեռք բերինք: Այդ արդէն մի քայլ է:

Վերջին պատերազմի բարերար ազդեցութիւնը հայկական գործի վրա, միայն այն քաղաքական

կապակցութիւնը չէր, որ յառաջացրեց, այլ և ուրիշ, շատ նշանաւոր հեռանքներ, որոնց կարելի է բաժանել երկու մասի՝ արտաքին և ներքին: Խօսելով արտաքին հեռանքների մասին, մենք մեր աչքին ունենք Եւրոպական հասարակաց կարծիքը, որի ամենուրեք ներկայացուցիչն է Լրագրութիւնը: Կարծիքներ, պիտի խոստովանած, բաժանված էին: Աչքի առաջ ունենալով արեւմտեան երեք մեծ տէրութիւնները՝ Անգլիան, Ֆրանսիան և Գերմանիան, եւ դո՛ւն այսպէս գտաւ այդ երեքի ուղղութիւնները մեզ վերաբերութեամբ. Անգլիան, որպէս գործի մէջ մասնակցող, չէր կարող մեծ անաչառութեամբ մեզ դատել. նա ասաց շատ լաւ և շատ վատ բաներ. դոմանքները նորա կողմից վերաբերում էին հայի և Հայաստանի իսկապէս լաւ յատկութիւններին, մինչդեռ պարտաւորութիւնի մէջ շատ բաներ ասացին, որոնց մենք արժանի չէինք: Մեզ մանաւանդ հետաքրքիր էր իմանալ գերմանացու և ֆրանսիացու դատողութիւնները, որովհետեւ սոքա որպէս գործից աւելի հեռու ազգեր, իրաւունք ունէին և հարկադրված էին աւելի լրջութեամբ և անաչառ կերպով մեզ դատել: Կը ցանկայինք երկու բառով միմեանց օրոգուցութիւնները. ինձ թուեց, որ գերմանացին որոնում էր Հայաստանում աւելի այն, ինչ որ չը կար, ինչու և մեզ շատ պարտաւորեցին և մի կերպ արհամարհանքով էին նայում մեր քաղաքական արդար պահանջանքների վրա: Մի հակառակ կողմն էր ներկայացնում ֆրանսիական լրագրութիւնը, որը Հայաստանում և հայի մէջ որոնում էր աղիւլ, լաւ և կեանքի ընդունակ ոյժերը, այսինքն այն, ինչ որ կայ, միշտ ցաւակցութեամբ խօսելով և պատմական դառն և տաժան հարուածներին վերաբերելով մեր թշուառ և կեղեքած վէրքերը: Ընդհանրապէս վերցրած, ոչ մի մեծ լրագիր մեր քաղաքական ձգտումներին

թշնամի չը հանդիսացաւ: Եւ միթէ այդ ներքին բան կը լինէր Եւրոպայի նման լուսաւորեալ աշխարհին *):...

Խօսելով մեր արտաքին քաղաքականութեան վրա, մի խօսք կը ցանկայինք Անգլիայի մասին ասել: Մեր լրագրութեան մէջ բազմաթիւ յորդածներ գրվեցան, որոնց նպատակն էր ցոյց տալ, թէ Անգլիան մեր բնական թշնամին է, այսինքն թէ Անգլիայի չափերը համեմատելի չեն Հայաստանի անկախութեան հետ: Մի այսպիսի եզրակացութեան հասնելու համար հարկաւոր են հաստատ հիւղեր, ծանրակշիւ պատճառներ. չը նայած մեր ամբողջ բարի ցանկութեան այդ պատճառները որոնել, մենք նոյնա չը գտանք: Ինչու՞ն է բանը, որպէս զի Հայաստանը չընկնի Ռուսաստանի ձեռքը, ոչ թէ ի սէր Թիւրքիայի և կամ ի վնաս Ռուսաստանի, այլ յօգուտ իր հնդկական, և եթէ ցանկաք, աւելցրէք նաև պարսկական քաղաքականութեան: Անգլիան ուզում է տեսնել ցամաքային ճանապարհը դէպի Պարսկաստան և Հնդկաստան, Հայաստանը ազատ մի որ և է օտարի զօրեղ ճնշումից. դա ասել կուզէ թէ նրան ցանկալի է տեսնել այդ երկիրը Թիւրքիայի նման թող տէրութեան ձեռքում, բայց մի և նոյն ժամանակ իր հակողութեան տակ: Անգլիայի օր չափերը պիտի վտանգի

*) Գայտի է, որ շատ անգամ մանր բաները աւելի ճիշդ են յայտնում մարդու սիրտը քան երկար ու բարակ դատողութիւնները: Այդ պատճառով մենք կը ցանկանք մի փաստ հաղորդել, որը մեզ շատ բնաւորեցուցիչ է թուում: Երբեք տեսնված չէր, որ մի լրագիր իր քաղաքական մասնում «Հայաստան» վերնագրով լուրեր հաղորդէր, Հայաստանը քաղաքական մարմին չը լինելով, սակայն մի այդպիսի դիպուած մենք առիթ ունեցանք «Temps» լրագրում մի անգամ տեսնելու:

չութիւնը ուսումնարանն չէ մտնում, ժողովներ չեն կայանում, անկարգութիւնը վերին աստիճանի է հասնում, երեխաները քարէ կարկուտներով ուսումնարանին հարեանները զանազանում, տարբեր ամեն եղանակում և ամեն ուսուցչի ձեռքով աշակերտներն են ընդունուում, ստացած թոշակագրումներին մի մասը տէր Ս...ն, մի մասն էլ տեսուչը ստանում և իրանց գրպանումն են դնում. առանց խնդրի և հոգաբարձական ժողովի. իսկ մի քանիսն ախլի էլ երեք բուրգու տեղ տեսուչը չի ստանում, երկուսը վեր առնում, երեք բուրգու համար աղափոխութիւնը տալիս. հարցաքննութեան ժամանակ բաժանած բոլոր պարագաները աշակերտներին յետ խնամ Սկարապետան ընկերութեան անունով, աղքատ երեխաներին փող հաւաքում և իրան գանձարանը ձգում ու լուծում, նոր մանկավարժական մէթոդով աշակերտներին պատմելիս քանոնով կամ արմուճկին կամ մատներով ծայրերին և կամ գլխին վեր տալիս: Այսպէսով հոգաբարձուի մէկը կամենում է տեսչին արձակել. միւսները չեն համաձայնում. վերջիններն են կամենում արձակել, առաջինն է հրաժարական տալիս, նախագահը հեռանում, հոգաբարձուն հրաժարուում, երկայնարար միմեանցից խոսուում և ուսումնարանը բարձի թողնում: Միմիայն տէր հայրն է, որ իր բարեկամ անդամակիցներով ամեն գործում գտնուում, մէկից միւսին երկրորդից երրորդին ասում, խառնում և կռիւր սաստկացնում: Կրկին սկսվեցան հարցաքննութիւնները և վերջնապէս ժամանակ և կաւ նոր թեմական տեսուչ պ. Տէր Գրիգորեանց: Կողմնակի մարդ միայն այս նամակի գրողն էր, որ ամեն օր այցելում էր ուսումնարանին, ոչ հոգաբարձու, ոչ օրական հարցաքննիչի ցուցակ, ոչ նրանց պրօգրամ, ոչ սովորած, ոչ սովորեցած, բոլորը խառնաշաւիղներ: Քեմական տեսուչ վկայութիւնը բաւական է հարցաքննութեան ժամանակ աշակերտներին աղիտութիւնը և նոյն միջոցի անկապուածութիւնները հաստատելու համար: Վերջին օրը երկու հոգաբարձու էլ ներկայ էին: Սրանից յետոյ մի խաղաղակ թղթով արձակեցին պ. տեսչին, բայց նա չէր հրաժարուում և բռնի կերպով արձակութիւններն երկու ամիս մնաց ուսումնարանին տնտեսականում, մինչև որ թեմական տեսուչ կողմից գրած հեռագրով արտաքսեցին պարոնին: Նույն յաջորդի առաջարկութեամբ և ժողովրդի ցանկութեան համաձայն հրակրեցին նրա տեղը Ներսիսեան ուսումնարանում մանկավարժ պատրաստված և այս տարի աւարտած մի աշխոյժ երիտասարդի: Տէր Ս. գովեց սրան, բարձրացրեց ամեն տեղ, բայց երբ պայմանների վրա խօսակցեցին և այս նորեկ պարոնը առաջարկեց՝ առաջ հեռացնել բոլոր ուսուցիչներին և յետոյ թող տալ որ ինքը նոր ընկերներ հրաւիրէ, այդ ժամանակ հենց ժողովի մէջ հետեւի առաջին պաշտպանը հանդիսացաւ տէր Ս...ն, հոգաբարձուը քրթնմիջացին միմեանց հետ և ժողովը առանց որ և է վճարի ցրվեցաւ: Միւս օրից սկսած տէր Ս...ն գիշեր ու ցերեկ յաճախում է հոգաբարձուների մօտ մէկին խնդրում, երկրորդին աղաչում, երրորդին համոզում որ այդ առաջարկութիւնը չընդունի: Իսկ եթէ ժողովուրդն է հարցնում նրան, պատասխանում է թէ՛՝ «մեծ ուժնի է ուղում, որտեղից տանք, և մանաւանդ որ ոչինչ գիտութիւն չունեն: Բայց ժողովրդի կողմից մի քանի հասկացող մարդիկ գիտում են տեղական յաջողից, որ նորեկ ուսուցչի առաջարկութիւններն ընդունվի և ինչքան որ փող հարկաւորվի ժողովուրդը պատրաստ է տալ ուսումնարանին: Հոգաբարձուը չեն ընդունում ժողովուրդի պահանջը, ժողովուրդը զրգուկած է, իսկ հրաժարված տեսուչը իր մասնաւոր աշակերտների հարուստ աղա ծնողների առաջ ծանուցում է որ կրկին նրան ընդունել տան, տէր Ս. էլ սրան օգնում է հոգաբարձութեան վրա ազդելով: Այդ միջոցում հոգաբարձուը «Մշակ» մէջ պ. Չ...ի նամակները կարդալով փրփրում են և նրան վրէժխնդիր լինելու համար մտադրում են կրկին ընդունել դեռ նոր անպատուած և հրաժարեցած տեսչին: Իսկ սա իր պաշտօնի մէջ մնալու համար դեռ նոր նոր հնարներ է պտտում, որից յետոյ պէտք է սկսվի այս նամակի աւելի հետաքրքրական մասը որ սրա երկարութեան պատճառով թողում եմ միւս անգամին:

Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Յիշեցնում ենք մեր ընթերցողներին, որ այսօր, չորեքշաբթի օր, հոկտեմբերի 3-ին, Ա թ դ ու ռ ու

թատրոնում ուսուցիչները տալու են մի կոնցերտ-ներկայացումն բարեգործական նպատակով: Աֆիշան շատ հարուստ է: Կը խաղան Պէշ-դիա, բացի սրանից պ. Բերիձէ կերպէ մէնակ և խօրով ուսուցչի և վրաց երգեր, իսկ պ. Բարետակի կը կարգայ ոտանաւորներ: Ներկայացմանը մասնակցում են տիկիններ՝ Լվովա, Սվետլովնայա, Միխայիլովա և Սալիցկայա և պ. պ. Բարետակի, Բայսկի, Սիսոյին և Ֆեօփորով: Ներկայացման վերջը կը ներկայացնեն չորս կենդանի պատկերներ: «Երկուսի գերի», «Գլխի Սպանիակում», «Բաւարի երազը» և «Երկու աղօթքը» Գաները սովորական են: Սկիզբը 8 ժամին երեկոյեան:

Շնորհակալութեամբ ստացանք ՄՕՍԿՎԱՅԻՑ «Հարկարամեակ կենարար սուրբ Խաչի վերացման Մոսկովայի հայոց եկեղեցու» վերնագրով գիրքը, որ ցարկը աւագ քահանայ Սուրենեանցի աշխատասիրութիւնն է: Գիրքը շատ հետաքրքիր նիւթեր է պարունակում իր մէջ: Այդ գրքի մասին մեր Մոսկովայի թղթակիցը խոստացել է մեզ մի քննութիւն ուղարկել:

Ս. Պետերբուրգի «Русская Правда» լրագիրը իր № 134 մէջ գրում է հետեւեալը Գրիգոր Արծրունու դասախօսութեան մասին: «Թիֆլիսում հայոց լեզուով հրատարակվող «Մշակ» լրագրի խմբագիրը, զօգտօր Գրիգոր Արծրունի, ցանկանալով ծանօթացնել իր հայրենակիցներին թիւրքաց հայերի տնտեսական դրութեան հետ, կարողացաւ մի դասախօսութիւն թիֆլիսի արհեստագործների ժողովում: Այդ դասախօսութիւնը նորերումն թարգմանեց հայերէն լեզուից գերմանական լեզուով պ. Ամիրխանեանց և հրատարակեց նրան Ս. Պետերբուրգում: Գոյտօր Արծրունի շատ զբաւիչ դրանով նկարագրում է այն երկրը, որ բնակված է աւելի քան երկու միլիոն իր հայրենակիցներով, որոնք դեռ մնացել թիւրքաց իշխանութիւնն տիրապետութեան տակ և որոնք չուտով մանկու են Անգլիայի ինստիտուտի մասին տակ: Համարիտ որքան մեծ և առատ բարիքներ ընտելիւնը պարգևել է Հայաստանին» Այդ տեղ ուսուցիչը խօսում է Հայաստանի աշխարհագրական աղողիքի մասին, այդ երկրի առեւտրական մեծ քաղաքների մասին, յիշում է բնական թէ՛ հանքային, թէ՛ բուսական և թէ՛ կենդանիների հարստութիւնները, թեւում է մի առ մի Հայաստանի բազմատեսակ արդիւնաբերութիւնները, յիշում է հայ մարդու և կնոջ աշխատասիրութիւնը, նրանց ճարտարութիւնը թէ՛ հասարակ և թէ՛ բարձր արհեստներին մէջ և վերջացնում է իր խօսքը ասելով. «Եւ ահա ընտելութեանց այդքան առատաձեւուն կերպով վարձատրված երկրում, որ բնակված է այդքան աշխատատէր, հուռց արդիւնագործ և քաղաքակիրթ ազգից, մի երկրում, որ զբաւիտ դրանք է գտնուում, կեանքը այժմ բոլորովին դարձաւային չէ: Ամեն բան ինչ որ հայ ընտանիքը խնայում է, դործ է դրվում կամ թիւրք պաշտօնեաների կաշառքների վրա, կամ ոչինչանում է թիւրք զինուորների ձեռքով, կամ վերջապէս, իրում է քրիւղների ձեռքով: Գոյրան աւելացրէ, որ հայերին սպառնում է մօտիկ ապագայում անգլիացիների նուաճումը, Փոքր-Ասիայի համար իրանց նշանակված բարեբար րէֆորմներով, որոնք երկի նման կը լինեն Նիպոս կղզու վրա նրանցից մտցնելով րէֆորմներին, ինչպէս, օրինակ, բռնի աշխատանքը և մարմնի պատիժը» Զատալի է միայն որ ուսուցիչը հայերի վերաբերութեամբ այդ համակրական տողերի մէջ մենք նկատում ենք մեծ անձեղութիւններ հայոց այլ և այլ անունների և բառերի դրութեան մէջ:

ՇՈՒԼԱՎԵՐԻՑ մեզ գրում են հետեւեալը: «Միմիայն մէկ ամիս առաջ շուշապեցի կէտիչի Զարութիւնը Բորչալուի մէջ առնում է մի պարտիզան թուրքից մէկ խաղաղ գողացած ցորեն խոտանալով որ ոչ ոքի յայտնուում չէ թէ իր գնածը գողացած է եղել. բայց նա հակառակ իր խոստման յայտնում է իրօրութիւնը: Այս բանի վրա զու պարտիզանը հետամուտ է լինում Զարութիւնին: Անցկացած մի քանի օր Զարութիւնը իր տանաւանց օրը հետ գործով դարձեալ Բորչալու գնալով վերադառնալիս այլ ևս չեն հասնում առն, մինչ նրանց էջը և խաղիքը գտնում են: Ուստի կառավարութիւնը կարծելով թէ յիշեալ պարտիզանը նոցա սպանած կը լինի, բանտարկել են նրան»

ԱՌԱՂՔԱՂԱՔԻՑ մեզ հաղորդում են, որ շրջականերում գտնված կաթնակ գիւղում մի երիտասարդ դաշտից խոտ կրելուց յետոյ, վերադառնում է տուն և յայտնում է, որ նրա գլուխը ցաւում է. կէս ժամից յետոյ երիտասարդը մեռնում է: Այդպիսի դէպքեր մեր գիւղերում շատ են պատահում: Նոյնանման մի անցքի մասին թղթակիցը հետեւեալ պատմութիւնն է լսել իր բարեկամից. «Մի երիտասարդ արեգակի ճառագայթների տակ խոտ կրելուց յետոյ գալիս է տուն և յանկարծամահ է լինում: Չանցաւ մի ժամ և ննջեցեալին բերին եկեղեցի: Եւ դնացի եկեղեցի և հետաքրքրվեցայ տեսնել ննջեցեալի դիակը: Եւ նրան գտայ բոլորովին փափուկ և ջերմ: Եւ կասկածեցի այդ մարդու իսկական մահունքն մասին, բերել տունցի քաթանի կտոր և քանդելով պատանը սկըսեցի այդ շորով շիկել հիւանդի մարմինը: Եւ ցանկացայ մի մարդ գտնել, որ արեւն թողնէր նրանից, բայց չը գտնվեցաւ: Ննջեցեալի մարմինը բաւական ժամանակ չփեղուց յետոյ, նրա աչքերը բացվեցան և կրկին խփվեցան: Այս անգամ նա ճշմարիտ մեռաւ: Գիւղերում կարծեցեալ մեռեալներ, որոնք դեռ կենդանի են, շատ են:

Հինգշաբթի, հոկտեմբերի 4-ին, հայ դերասանական մշտական խումբը Թիֆլիսի Ամարային թատրոնում կը ներկայացնէ «Հենրի VIII», դրամա հինգ արարուածներով, հեղ. Ալեքսանդր Գիւմայի:

Մեզ գրում են ԱՌԱՂՔԱՂԱՔԻՑ. «Մեր հոգաբարձուներից մինի մօտ կայ 2000 բուլը ուսումնարանապատկան փող: Նա մինչև այժմ այդ փողերի տոկոսը վճարած չէ և հաւատացնում է որ այդ փողը նա չըջարկութեան մէջ չէ ունեցել: Եւ մնողւում պահած: Մեր մէջ կան մարդիկ, որոնք նրան չեն հաւատում: Շատ վատ ժամանակներն ենք չանել, որ մինչև անգամ հաջի աղաների և զույս տեսողների» խօսքերին չեն հաւատում: Սրանից մի քանի օր առաջ քաղաքին առաջաւոր անձերից մի քանիսը խնդրեցին նոյն հաջի աղաները նրա մօտ գտնված փողերը: Նոյն անպատեմերի 8 մինչև 10 են պահանջել, բայց հաջի աղան» չէ վճարել:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԹԻՒՐԻՔԻՍ

Ռուս լրագրիներին հաղորդում են Կ. Պոլսից, սեպտեմբերի 20-ից, որ այս օրերս Սուլթանի պալատում տեղի ունեցաւ միմիայնութիւնների մեծ խորհուրդի նիստը, որին մասնակցում էին Մահմուդ Նեջիմ-փաշան և շատ ուրիշներ, որոնք այժմ էլ բարձր պաշտօններ են վարում թիւրքաց պետութեան մէջ: Խորհրդի նստի վիճարանութեան գլխաւոր առարկան վերանորոգութիւնների խնդիրներն էր: Սուլթանը համոզում էր մինիստրներին, առանց յապաղելու հնարներ գործ դնել որոնք կարող էին նպաստել Թիւրքիայի ֆինանսական դրութեան բարելոցելուն: Նստի հետեւանքը այն եղաւ, որ կազմվեցան երկու նոր յանձնաժողովներ, որոնց պաշտօնը պէտք է լինի ֆինանսական մասը վերանորոգելու: Բ. Գուռը անտես չէ առնում և կառավարչական րէֆորմներ. մինիստրների խորհրդի երեք նիստը նուիրված էին բացառապէս վիլայէթները կառավարելու համար կազմվող նոր օրգանական կանոնների քննադատութեանը: Անտարակուսել է որ Վիեննայում, դեռ իշխան Բիսմարկի զալուց առաջ, կազմված է եղել այդպիսի Թիւրքիայի կազմակերպութեան վերաբերութեամբ մի նոր պլան: Պլանին համեմատ Թիւրքիան պէտք է բաժանվի տաս նահանգի վրա, որոնք ստորադրված կը լինէին եւրոպական յանձնաժողովի վերահսկողութեանը: Վիեննայում մշակված պլանին համեմատ Փոքր-Ասիայի թիւրքաց իշխանութեան գործունէութեան վրա կոնտրոլը դիտաւորութիւն

կայ յանձնել Ֆրանսիային և Անգլիային, իսկ եւրոպական Թիւրքիայում Աւստրո-Ունգարիային և Գերմանիային: Բացի սորանից վճռված է որ Ֆրանսիան գրաւի Բօզոս կղզին, որի փոխարէն Թիւրքիային թող տրված կը լինի մի միլիարդի չափով փոխառութիւն անել, որին կերպարաններ Ֆրանսիան և Անգլիան: Ասում են Կրիտէ կղզու նահանգապետ Փոտիարէս-փաշա, նշանակվելու է Թիւրքիայի դեսպան Փարիզում:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Վերջին օրերս «Միջազգային ընկերութիւն» մեզ ուղարկվող հեռագրիները շատ անկանոն կերպով են ստացվում. մի օր շատ հեռագիր է գալիս, միւս օր քիչ: Որինակ այսօր ազատ տեղ թողնեցինք մօտ մի կօշոն, սպասեցինք մինչև 10 ժամ երեկոյեան, բայց ստացանք միայն երեք չորս տողերից բաղկացած մի հեռագիր: Մնացած դարակ տեղը ստիպված ենք լցնել այժմ խառն լուրերով:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ մեզ գրում են: «Ապտեմբերի 2-ին գեներալ Լազարելի յիշատակին Մոսկովայում և Ս. Պետերբուրգի կատարած հոգեհանգստի հանդէսը հայ եկեղեցիների հոգաբարձութեան կարգադրութեամբ էր արած և ծախմն էլ եկեղեցական անդուլիցն էր: Հոգաբարձութիւնը կամեցաւ յարգել գեներալ Լազարելի թէ տէրութեանը արած ակամաւոր ծառայութիւնները, թէ նրա հաղապարս զինուորական ջաջութիւնը ու բնական հանճարը և թէ նրա ջերմ ազգասիրական բզգացմունքը, որ նա յայտնապէս ցոյց տուց մահաւանդ վերջին պատերազմի ժամանակ: Եկեղեցական հանդիսի մասին յայտարարութիւնները սպվեցան մայրաքաղաքի ամենաշնանաւոր եօթ թէ ութ ուսում մեծ թիւրքերում:

ՕԴԷՍԱՅՈՒՄ նորերում գուրս կեաւ պրօֆէսոր Յիտովիչի մի նոր գիրք «Русско-Византизм» վերնագրով, որ այժմ շատ է կարդացվում Ռուսաստանում: Յիտովիչ յայտնի է արդէն իր ուրիշ պոէտիկական յօդուածներով: Թիֆլիսի գրավաճառների մօտ այդ գրքի մի քանի օրինակներ ստացվեցան և բոլորն էլ ծախվեցան: Գիրքը շատ թանգ է, նա արժէ 4 բուլը:

Այս օրերս, ինչպէս մեզ հաղորդեց հեռագիրը, վախճանվեցաւ Ս. Պետերբուրգում ուսուցչ երեւելի դերասան Կարաւի Գիւն: Հեռագրի մէջ տալովստի հանգուցեալի ազգանունը աղաղակված էր:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

10640Ն, 113 հոկտեմբերի: Անգլիական «Standart» լրագրին հեռագրում են Սիմայից, որ բրիտանական հեծելազորքը թողնի Կարբուլ, որտեղ գտաւ 72 թնդանութներ: Կարծում են որ ընդդիմադրութիւնը վերջացած է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐԻՆԻ

